



Պարույր Սևակ

Երագում եմ

Հասակս առած, խոհեմ դառած մարդ եմ արդեն,
Բայց, արի տես, դեռ գցում եմ ինձ դեսուդեն...
Ինձ թվում է, թե դեռ պիտի քեզ փախցընեն
Ու հետս առած՝ դաշաղ դառած՝ քեզ թոցընեն
Անտակ ձորից, գարնանային գիժ գետակից,
Եվ ինչ ուզես՝ գտնեն անգամ քարի՛ տակից.
Թե սոված ես՝
Կերակրեն եղնիկների համեղ մսով,
Թե ծարավ ես՝
Քեզ մոտենամ ցողով լեցուն ծաղկե թասով,
Թե դրսում ես՝
Պալատ դառնամ հանկարծակի,
Թե մրսում ես՝
Կրակ խլեմ և կայծակից,
Խփված արջի ոսկորներից խարույկ վառեն,
Խարույկի մոտ քո պաղ խոսքից իսկույն սառեն,
Սառցի մեջ էլ կրակ կտրեն խոսքից քո ջերմ...
Բայց ես հիմա այն պատանի տղան հո՞ չեմ:
Հասակս առած, խոհեմ դառած մարդ եմ արդեն,
Բայց, արի տես, դեռ գցում եմ ինձ դեսուդեն:
Ինձ թվում է, թե դեռ պիտի մի օր աշխարհ զարմացընեն.

Հին ջութակի յոթ լարի մեջ մի ութերորդ լար մտցրնեն

Ու նվագեն:

Չնվագե՛ն, այլ սար ու քա՛ր լացացրնեն:

Եթե ինչ-որ տեղդ է ցավում,

Իսկույն բուժեն՝ լոկ հայացքո՛վ...

Մի հինավուրց քարանձավում,

Աստվա՛ծ գիտի ինչ հրաշքով,

Բոլոր մեռած լեզուներով գրքեր ճարեն

Եվ բոլորը... ե՛ս վերժանեն...

Գնամ մտնեն Վանա լճի խորքերն անտակ

Եվ ի՛նչ - գտնեն հին հայկական հագա՛ր քանդակ...

Մի օր հանկարծ ջղայնանամ ու վերցրնեն

Մթնոլորտը մեկ այլ օդով թարմացրնեն...

Արեգակի, լուսնի լույսով պատեր ծեփեն,

Խարույկների հոսուն բոցից սարքեն սեպեր,

Գրեն վեպե՛ր,

Եվ ի՛նչ վեպեր...

Հասակս առած, խոհեն դառած մարդ եմ արդեն,

Բայց, արի տես, դեռ զգում եմ ինձ դեսուդեն...

Ինձ թվում է, թե դեռ պիտի

Ես վերստին դառնամ ջահել՝

Իբրև հայտնի մարմնամարզիկ,

Մրցանակներ անվերջ շահեն.

Թե դեռ պիտի չենպիոն դառնամ ես շախմատի

Եվ, համաձայն պատվիրանին սուրբ Մահմադի,

Բերան չառնեն օդու, գինու ոչ մի կաթիլ.

Ծխախոտով էլ չպիտի թունավորվեմ՝

Իմ իսկ ձեռքով էլ չպիտի տնավերվեմ,

Էլ չպիտի ուրիշներով տարվեմ-գերվեմ...

Միայն պիտի մեկին սիրեն, մեկից սիրվեմ...

Այս հմայիչ երազներից գեթ երկուսը կկատարվե՞ն:

Ես կարող եմ պատասխանել այդ հարցի՛ն էլ.

-Միայն մեկը

և - վերջինը...

28.V.1957թ.

Մոսկվա